Եփրեմ Սեթի մահվանից հետո Սուրբ Ղազարում նրա աշխատանքներից ու թարգմանություններից հրատարակվեցին՝ ա) Իրաւագիտութիւն (1851, 659 էջ), բ) Սուրբ Օգոստինոս. Առանձնախօսութիւնք եւ առձեռնականք. թարգմ. Սեթեան հ. Ե., (1858, 250 էջ), գ) Պատմութիւն Ջորից ինքնակալութեանց (1848, 352 էջ)։

Գաղթի կազմակերպման գործում ռուսական իշխանություններին մեծ չափով աջակցություն ցուցաբերած և անձամբ հայ կաթոլիկ բնակչության գաղթը կազմակերպած այս մխիթարյան վարդապետի Ս. Ղազար ուղարկված առայժմ անտիպ նամակները հանդիսանում են առաջնակարգ աղբյուր հայ բնակչության մինչ այդ չտեսնված չափերի հասնող տեղաշարժի ուսումնասիրման գործում։ Եփրեմ վարդապետ Սեթը, որ կազմակերպեց և անմիջականորեն ղեկավարեց Էրզրումի և շրջակա բնակավայրերի հայ կաթոլիկների գաղթը և նրանց տեղաբաշխումը Ջավախքում, իր նամակներում հաղորդում է ամենայն մանրամասներ գաղթի կազմակերպման մասին և դրանով իսկ հանդիսանում է առաջնակարգ աղբյուր հայ բնակչության այս մեծագույն տեղաշարժի մասին։ Եփրեմ Սեթի և մյուս վարդապետների նամակը նկատի ուներ գեներալ Ն. Պ. Պանկրատևը, երբ 1829 թ. դեկտեմբերի 1-ին զեկուցում էր Ի. Ֆ. Պասկևիչին. «Էրզրում քաղաքի կաթոլիկ հայերի վարդապետները, ավագների հետ միասին ինձ խնդրագիր մատուցեցին ռուսական սահմաններ տեղափոխվելու վերաբերյալ»։ Ն. Պ. Պանկրատևը Պասկևիչից հրաման է խնդրում վերջիններիս գաղթը կազմակերպելու համար և հաղորդում է հետևյալ վիճակագրական տեղեկությունները կաթոլիկ հայերի թվաքանակի վերաբերյալ[6].

Էրզրում քաղաք	240 ընտանիք
Օվայ	
Արծաթի	74
Հինձք	20
Գամփռ	10
Կարա-Քեոփեկ	8
Թուգանդոժ	5
Թերջան	
Նորշեն	40
Ռոբաթ	15
Մեղուս	4

ըստ գովելի ջանիցն, յօգուտ ազգային՝ շնորհեաց ի պարգեւ Միաբանութեանս մերոյ, յամին 1829, յորում էր մատեան ճառից Սրբոյն Բարսղի, գրեալ ի թուիս մերում ՁԹ [89]»։

Եվ իսկապես, նվեր ստացված հետևյալ ձեռագրերը այժմ պահվում են Ս. Ղազարի Ձեռագրատանը՝

ա) ձեռագիր № 215—Յովհան Ոսկերերան [1268—1286 թթ.], ձեռագրի առաջին տերը եղել է Հակոբ Ա կաթողիկոսը, վերջինը՝ Հովսեփ Արղությանը։

բ) ձեռագիր № 452—Եփրէմ Ասորի [1195 թ.] և այլն։

Այս ձեռագրերի վերաբերյալ Հայտնի Ավգերյան ցուցակում կարդում ենք «Յիշատակ ի գրատուն Մխիթարեանց ի Վենետիկ, իշխանազուն Քնէազ Նիկողայոսի Երկայնաբազուկ Արղութեանց, 13 Յունիսի 1829, Տփխիս», «Առաքեաց առ մեզ զմատեանս Վ[երապատուելի] Հ[այր] Եփրեմ Վ[ա]րդ[ապետ]ն մեր Սէթեանց, ի ճանապարհորդութեան իւրում յաշխարհ Հայաստանաեայց, որ եւ եհաս առ մեզ ի Վենետիկ յամի Տեառն 1831, ի 16 Դեկտեմբերի»։ Սրանց եւ Սեթի կողմից արտագրված այլ ձեռագրերի մասին տե՛ս Ս. վ. Ճեմճեմեան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ հ. Ը, Վենետիկ, էջ 4, 182, 262, 318—319 եւ այլն (անտիպ)։

[6] Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Т. II (1814—1830), Под ред. Ц. П. Агаяна, Ереван, 1978, док. 367, стр. 601—602.